Հայաստանի ատոմային էներգետիկայի հասարակության
պրոֆ. Ռ. Հազարյանին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր ատոմային էներգիայի օգտագործման մի-
ջուկային և ռադիացիոն անվտանգության կոնսուլ-
տատիվ խորհրդի նիստի

1 ապրիլի 1995 թ. N ԱԽ-26-118

Նախագահում էր՝ Վ. Չիտեչյան

Մասնակցում էին՝
Կոնսուլտատիվ խորհրդի անդամներ՝ Ա. Ամատունի, Ս. Բաղալյան, Կ. Դանիելյան, Ա. Հակոբյան, Ռ. Ղազարյան, Գ. Մանոյան, Ա. Մարտիրոսյան, Ռ. Մարտիրոսյան, Ա. Մելիքսեթյան, Ռ. Մկրտչյան, Յու. Սարգսյան, Ֆ. Սարգսյան, Հ. Վարդապետյան, Զ. Կիրակոսյան

Հրավիրված մասնագետներ՝ Ֆ. Առաքելյան, Ռ. Զրբաշյան, Ա. Կարախանյան, Ռ. Խարազյան, Գ. Աքսկալյան, Է. Խաչյան, Ս. Բալասանյան, Ա. Առաքելյան, Ա. Ավանեսյան

Հայկական ԱԷԿ-ի տարածքի լրացուցիչ սեյսմիկ հետազոտությունների նախնական եզրակացության քննարկման մասին

Քննարկելով «Հայկական ԱԷԿ-ի սեյսմիկ պայմանների լրացուցիչ ուսումնասիրություն» թեմայով կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա արված նախնական եզրակացության նյութերը.

Նշել, որ

ա) աշխատանքների ծրագիրը կազմված է նկատի առնելով ՄԱԳԱՏԷ-ի (50-5G-51) Ռուսաստանի Դաշնության (ՊՆԱԷԳ-5-006-87) նորմատիվ փաստաթղթերը և համաձայնեցված է ՄԱԳԱՏԷ-ի 1993 թ. 26-29 նոյեմբերի միսիայի, ՌԴ «Ատոմէներգոնախագիծ» ինստիտուտի (1-6 հուլիսի 1994 թ.), ինչպես նաև այդ աշխատանքներին մասնակցած ՀՀ առաջատար կազմակերպությունների հետ:

Աշխատանքները կատարվել են «Հայէներգասեյսմանախագիծ» ինստիտուտի կողմից՝ ՀՀ հետևյալ կազմակերպությունների մասնակցությամբ. ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության

ազգային ծառայություն, ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ, Հայընդերքպետվարչության երկրաբանա-երկրաֆիզիկական արշավախումբ, Սեյսմակայուն շինարարության հայկական գիտահետազոտական ինստիտուտ, Երևանի պետհամալսարանի երկրաբանական ֆակուլտետ, «Հայարդշինանյութ» ՊԱՁ.

բ) աշխատանքների կատարման ընթացքում արդյունքները պարբերաբար քննարկվել են «Հայէներգասեյսմանախագիծ» ինստիտուտի գիտատեխնիկական խորհրդի ընդլայնված նիստերում, ինչպես նաև ՄԱԳԱՏԷ-ի 1988 թ. 26-29 նոյեմբերի, 1994 թ. 1-6 հուլիսի և 1994 թ. 11-16 նոյեմբերի միսիաների կողմից.

գ) այդ աշխատանքների վերաբերյալ նախնական հաշվետվությունը ուղարկվել է փորձաքննության ՌԴ «Ատոմէներգանախագիծ» ինստիտուտ (ք. Մոսկվա) և ստացվել է կարծիք-գնահատական.

2. Առաջարկել «Հայէներգասեյսմանախագիծ» ինստիտուտի տնօրեն Ֆ. Առաքելյանին ներկայացված նյութերը քննարկել «Ատոմէներգոնախագիծ» ինստիտուտի հետ և Ռուսաստանի Դաշնության ատոմային էներգետիկայի նախարարության աշխատանքային խմբի նիստում:

3. Առաջարկել «Հայէներգասեյսմանախագիծ» ինստիտուտի տնօրեն Ֆ. Առաքելյանին կատարված աշխատանքների մասին զեկուցել ՀՀ ԳԱԱ:

4. Առաջարկել կոնսուլտատիվ խորհրդի անդամ պրն Ա. Հաճյանին, ներգրավելով համապատասխան փորձագետների, մինչև 1995թ. մայիսի 10-ը կազմակերպել ներկայացված աշխատանքների վերլուծություն:

5. Նշել՝ 1995 թ. մայիսի 20-ին տեղի կունենա կոնսուլտատիվ խորհրդի նիստ, կատարված աշխատանքները լրացուցիչ քննարկելու համար:

ԿՈՆՍՈՒԼՏԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՉԻՏԵՉՅԱՆ

ԿՈՆՍՈՒԼՏԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԻ ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ՄԱՆՈՅԱՆ

ARZ5.DOC